

Կը դնենք այստեղ այս քանի մը մանրամասնութիւններն ու նկատողութիւնները, լուսարանելու, և, եթէ կարելի է, ամօքելու համար դառն կսկիծէն շփոթուած հանրային զգացումը, և կը փափաքինք յուսալ թէ կիլիկեան աթոռին հինգ թեմական շրջաններու ժողովները, որոնց ամենուն կողմէ ողբացալ կաթողիկոսին դազողին շուրջ ցուցուած խոր վիշտը սփոփանքով միայն դիտուեցաւ ամէնքէն, պիտի ընեն իրենց բովանդակ կարելին, սկսուած զործը, իր երկու ուղղութեանց վրայ ևս, շարունակելու համար ըստ արժանւոյն։ Կը սիրենք մտածել նոյնպէս թէ կիլիկեան այդ թեմերու սրբազան արքեպիսկոպոսունք եւ եպիսկոպոսունք, որնէ աստեղէ աւելի աննկատ համբարշտութեամբ և անկաշկանդ հայեցողութեամբ՝ պիտի ջանան իրենք նախ սիրոյ և արդարութեան օրինակ հանդիսանալ ամէնուն, եղբայրօրէն և որդիաբար խմբուելով իրենց Հոգևոր Տիրով և Հօր շուրջը։

Գործ մը կայ հոգ շինուած՝ մաքուր և բարի ձեռքերէ։ Բախտէն զարնուած, արհաւիրքներէ հալածական, բայց Աստուծոյ առաջնորդութեամբը նոր և երջանիկ հայրենիքի մը մէջ ապաստան դտած և հազիւ ուշքի եկած ժողովուրդի մը, կիլիկեայութեան, հոգևոր և բարոյական վերականգնութեան գործին ամենէն կարևոր մասերէն մին է ան. պէտք չէ քանդուի, պէտք չէ աղճատուի, պէտք չէ հովերուն թողուի ան. Զայս կ'անկնկալէ և կը պահանջէ ազդին խղճմանը՝ կիլիկեան թեմերու ազգային իշխանութեան եկեղեցական և աշխարհական մարմիններու բարեխղճութենէն։

Ասիկա՛ կը պահանջէ նաև, ամէն բանէ աւելի յարգանքը յիշատակին հանդուցեալ հայրապետին, որ, թէև արքուակիցի համեստ տիտղոսին տակ եւ մասնաւոր կաթողիկոսութեան երկրորդական դերքի մը վրայ, ապրեցաւ, զործեց և իր կեանքը արդիւնաւորեց իրապէս Անժ կաթողիկոսի մը արժանիքներով, իբրև ստոյգ մեծութիւն մը, իբրև ճշմարտապէս մեծ ներկայացուցիչ մը Հայ Եկեղեցւոյ նուիրապետական շրջութեան։

* * *

ԱՌԱՅՏՐԻ ԵՒ ՄԵԱԵՌՈՒՄԻ ՑՈՒՐՆԵՐ

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ն ԵՐ Ը

Ա՛խ, ա՛յսպէս ուրեմն շինուած է կեանքը՝ փախուտ ամէն բաներէ, չըմտելանք, որոնք կը կորուսին միջոցին կամ մահուան հետաւորութեան մէջ։ Ի՞նչ փոյթ, սակայն. հերիք է որ սէրը, հերիք է որ Աստուած մնայ մեզի։ Ու միթէ միջոց մը չէ՞ ասի աւելի խորունկ ուրախութեամբ զգալու Աստուծոյ յաւիտեականութիւնը և յաւերժութիւնը սէրերու։ Այո՛, հաւատա՛նք այս յաւիտեականութեան. մերի՛նը ընենք զայն, իբրև մեր բարին։ Յիսուս ինքն է երաշխաւորը՝ անոր իսկապէս մերինը լինելուն, և մեր՝ անոր համար եղած լինելուն։ Լուրջ ըլլանք ինչպէս սէրը, ամենէն լուրջ զգացումներուն։ Մեր կեանքը սիրոյ կեանք մը պիտի չըլլար, եթէ չըլլար լուրջ, հաստատուն, օգտակարապէս կիրարկուած, խնամով անտեսուած։ Զկայ աւելի լաւագոյն անտեսութիւն ժամանակի, ոյժի և հարստութեան՝ քան սէրը։ Անօգուտ ցաւերէն, տարտամ տենչանքներէն և փառասնէյ յոյսերէն շատ աւելի լաւ է ան. Բայց չափազանց խիստ պիտի լինէինք մենք մեզի հանդէպ, և անհաւատարիմ՝ մեր իսկական զգացումներու վերաբերմամբ, եթէ մենք մեզի արգիլէինք մշակել մեր յիշատակները, մանաւանդ անոնք՝ որոնց բուրմունքը այնքան կենդանաբար է, որքան անոյլ։

Ա. Ա.